Արդյունաբերական քաղաքականություն և ՓՄՁ

1. Արդյունաբերական քաղաքականություն

Ներածություն

Հաշվի առնելով արդյունաբերական քաղաքականության բնագավառի առանձնահատկությունը՝ այս ոլորտում իրավական ակտերի համեմատական վերլուծություն չի կատարվել:

Արդյունաբերական քաղաքականության բնագավառում Եվրամիությունը անդամակցող երկրներին չի ներկայացնում որևէ պարտադիր օրենսդրական պահանջ, քանի որ այս բնագավառը հիմնականում ներառում է արդյունաբերության մրցունակության բարձրացման մի շարք ուղեցույցներ[1] և դրանց վրա հիմնված ծրագրեր[2], որոնք կրում են քաղաքական բնույթ և ենթակա չեն օրենսդրական համապատասխանեցման: Այնուամենայնիվ, անդամակցության գործընթացի ժամանակ թեկնածու երկրներին առաջարկվել էր մշակել ընդհանուր տնտեսական քաղաքականությունից առանձին արդյունաբերական քաղաքականություն՝ հիմնված եվրոպական սզբունքների վրա, որոնք 2000 թվականին ընդունել է Լիսաբոնի Եվրոպական խորհուրդը, և որոնք վերաբերում են մասնավորեցմանը, ճյուղերի վերակազմավորմանը, արդյունաբերության մրցունակության բարձրացմանը, ուղղակի ներդրումներին, գործարարության զարգացման համար բարենպաստ տնտեսական միջավայրի ստեղծմանն ու մի շարք այլ հարցերի:

Ազգային մակարդակով այս սկզբունքների իրականացմանն օժանդակելու համար Եվրոպական հանձնաժողովը մշակեց «Եվրոպական արդյունաբերության մրցունակության բարձրացմանն ուղղված Համայնքի գործողությունների ծրագրի կիրարկման մասին» թիվ 96/413 որոշումը, որը ներառում է դրույթներ՝ կապված ոչ նյութական ներդրումների խրախուսման, արդյունաբերական միջպետական համագործակցության, արդյունաբերական ոլորտում մրցակցության ապահովման և մի շարք այլ հարցերի հետ:

Թեև արդյունաբերական քաղաքականության բնագավառի ԵՄ դրույթները մասամբ արտացոլված են ՀՀ տարբեր ոլորտների քաղաքական փաստաթղթերում կամ օրենսդրական ակտերում[3], այնուամենայնիվ, անհրաժեշտ է մշակել տնտեսական ընդհանուր քաղաքականությունից առանձին արդյունաբերական զարգացման ռազմավարական ծրագիր և դրա կիրարկումը ապահովող տարեկան ծրագրեր, որոնց հիմնական նպատակը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունում մասնավորեցման ճյուղերի վերակազմավորման գործընթացի արդյունավետ իրականացումը, բարենպաստ ներդրումային և գործարարային դաշտի ձևավորումը, մրցակցության ապահովումը և այլն:

---

[1] «Արդյունաբերական քաղաքականությունը ընդլայնված Եվրոպայում» Հանձնաժողովի ուղերձ - COM(2002) 714 final of 11.12.2002թ., «Որոշ առանցքային դրույթներ Եվրոպայի մրցունակության մասին. դեպի միասնական մոտեցում» - COM(2003) 704 final of 21.11.2003թ., «Կառուցվածքային բարեփոխումների խրախուսումը. արդյունաբերական քաղաքականությունը ընդլայնված Եվրոպայում» Հանձնաժողովի ուղերձ - COM(2004) 274 final of 20.04.2004թ.:

[2] 1996թ. հունիսի 25–ի որոշում թիվ 96/413՝ «Եվրոպական արդյունաբերության մրցունակության բարձրացմանն ուղղված Համայնքի գործողությունների ծրագրի կիրարկման մասին»:

[3] Օրինակ՝ ուղեցույցներում ներկայացված մրցակցության ապահովման մասին դրույթները ՀՀ օրենսդրությունում տեղ են գտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում և այլ նորմատիվ իրավական ակտերում:

Քաղաքականության համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	Արդյունաբերական զարգացման ռազմավարական ծրագրի մշակում	Լիսաբոնի Եվրոպական խորհրդի եզրակացություններ Արդյունաբերական քաղաքականության եվրոպական ուղեցույցներ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	3-րդ եռամսյակ	50	Խորհրդատվություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		50	
			2008			
2.	Ռազմավարական ծրագրի կիրարկումն ապահովող տարեկան ծրագրերի մշակում	Արդյունաբերական քաղաքականության եվրոպական ուղեցույցներ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	40	Խորհրդատվություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		40	
			2009			
3.	ԵՄ արդյունաբերական քաղաքականության սկզբունքներին համապատասխանության մասին հաշվետվությունների մշակում	-	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	30	
			ԸՆԴԱՄԵՆԸ		30	
			ԸՆԴԱՄԵՆԸ		120	

2. ՓՄՁ

Ներածություն

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ այս ոլորտում ՀՀ օրենսդրությունը գրեթե ամբողջությամբ չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում Եվրամիության օրենսդրությունը սահմանում է փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը, տրվում են անկախ, գործընկեր և փոխկապակցված ձեռնարկությունների սահմանումները, ինչպես նաև աշխատողների թվաքանակի որոշման կարգը[4]: Համապատասխան հարցերը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով[5], որը, սակայն, ամբողջությամբ չի ընդգրկում վերոհիշյալ խնդիրների շրջանակը: Մասնավորապես, ՀՀ օրենքով աշխատողների թվաքանակից բացի, ՓՄՁ դասակարգման համար այլ չափորոշիչներ չեն սահմանվում, ինչպես նաև բացակայում են անկախ, գործընկեր և փոխկապակցված ձեռնարկությունների սահմանումը և աշխատողների թվաքանակի որոշման կարգը:

Այս ոլորտում Եվրամիության օրենսդրությունը ներառում է նաև «Զբոսաշրջության ոլորտում վիճակագրական տեղեկատվության հավաքման մասին» Խորհրդի դիրեկտիվը[6], որը սահմանում է զբոսաշրջության վերաբերյալ անդամ պետությունների կողմից Եվրոպական Հանձնաժողովին տրամադրվող վիճակագրական տեղեկատվության ցանկը, ինչպես նաև տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և գաղտնիության ապահովման կարգը: ՀՀ-ում սույն խնդիրները կարգավորում է «Միջազգային և ներքին զբոսաշրջության մասին ձև թիվ-1 զբոսաշրջության պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման մասին հրահանգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշումը[7], որը հիմնականում կարգավորում է նույն խնդիրների շրջանակը, սակայն տարբեր են պահանջվող տեղեկատվության ցանկը, հաշվետվության ներկայացման ժամկետները, ՀՀ իրավական ակտում բացակայում են մի շարք դրույթներ՝ կապված տեղեկատվության հավաքման, մշակման և փոխանցման հետ:

Հարկ է նշել, որ ՓՄՁ բնագավառը, որպես «acquis communautaire»-ի գլուխ, հիմնականում ներառում է պետական քաղաքականության փաստաթղթեր, որոնցից հիմնականն է «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիան: Խարտիայում տրված է այն միջոցառումների ցանկը, որոնք նպաստում են փոքր ձեռնարկատիրության զարգացմանը: Մասնավորապես, խարտիայում ներկայացված են դրույթներ՝ կապված ձեռնարկատերերի ուսուցման և վերապատրաստման, ձեռնարկությունների արագ և ոչ ծախսատար ստեղծման համար բարենպաստ միջավայրի ստեղծման, արդյունավետ օրենսդրական կարգավորման, խորհրդատվության մատչելիության ապահովման, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, միասնական շուկայի սկզբունքների հետ՝ ի նպաստ փոքր ձեռնարկատիրության օգտագործման, հարկային և ֆինանսական, փոքր ձեռնարկությունների տեխնոլոգիական հագեցվածության մակարդակի բարձրացման, հաջողակ էլեկտրոնային գործարարության մոդելների կիրառման և լավագույն գործարարներին աջակցություն ցուցաբերելու և փոքր ձեռնարկությունների շահերը՝ ազգային մակարդակով և ԵՄ-ում ավելի արդյունավետ ներկայացնելու և պաշտպանելու:

Բացի «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիայից, 2001 թվականին Եվրոպական հանձնաժողովը պարբերական քաղաքական երկխոսություն սկսեց անդամակցող պետությունների հետ՝ գործարարության ոլորտին առնչվող քաղաքականության մշակման ուղղությամբ: Երկխոսության արդյունքը «Անդամակցող պետություններում գործարարության զարգացմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» հաշվետվությունն է, որն ավելի հայտնի է «CC BEST report» անվանմամբ: Այն ներառում է անդամակցող պետություններում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված գործողությունների ցանկը, այն է՝ գործարարների ուսուցում և վերապատրաստում, զարգացման սկզբնական փուլերում գտնվող փոքր ձեռնարկությունների և բարձր տեխնոլոգիական ֆիրմաների համար ֆինանսական շուկա մուտքի ապահովում, գիտահետազոտական արդյունքների և նորամուծումների հասանելիություն, ՓՄՁ աջակցման ծառայությունների մասին իրազեկության բարձրացում, պետական վարչարարության բարելավում, աշխատանքային պայմանների բարելավում:

---

[4] 2003թ. մայիսի 6-ի Եվրոպական Հանձնաժողովի առաջարկություն թիվ C (2003) 1422՝ «Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման մասին»:
[5] ՀՕ-121, 05.12.2000թ.:
[6] 1995թ. նոյեմբերի 23-ի Խորհրդի թիվ 95/57/EC դիրեկտիվ:
[7] Թիվ 35, 04.04.2001թ.:

ՓՄՁ գլխին առնչվող այլ փաստաթղթերից հարկ է հիշատակել նաև «Գործարարության և ձեռնարկությունների, մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման բազմամյա ծրագրի մասին» Խորհրդի 2000թ. դեկտեմբերի 20-ի որոշումը, որով Եվրամիությունը ապահովում է «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիայի 10 դրույթների կիրարկումը: Այդ որոշմամբ նախատեսվում է համապատասխան ֆինանսական և խորհրդատվական կառույցների ստեղծում, ինչպես նաև Եվրահանձնաժողովի և անդամ պետությունների միջև համագործակցություն՝ խարտիայի նպատակներին հասնելու համար:

Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության առաջին փաստաթուղթը «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին» արձանագրային որոշումն է[8], որտեղ ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության իրականացման հիմնական ուղղություններն են իրավական դաշտի բարեփոխումները, ֆինանսական խնդիրների կարգավորումը, արտադրության զարգացումը, տարածաշրջանային զարգացումը, նորարարությունների ներդրման հնարավորությունների ընդլայնումը, տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը, ձեռնարկատիրության սոցիալական վարկի բարձրացումը, բիզնես ուսուցումը և կադրերի վերապատրաստումը: Այս փաստաթղթում ամրագրված պետական քաղաքականությունը իրականացվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի[9] միջոցով:

Մասնավորապես, ՀՀ-ում 2002թ. ստեղծված «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը :

Վերոհիշյալ փաստաթղթերի դրույթները հիմնականում համապատասխանում են ԵՄ քաղաքականության դրույթներին, սակայն տարբեր են դրանց կիրարկման միջոցները: Մասնավորապես, ՀՀ-ում 2002 թվականին ստեղծված «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը[10] նպատակային ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական (ներդրումային) հնարավորությունների ընդլայնման նպատակով Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում տրամադրում է վարկային երաշխավորություն, որի գումարը չի կարող գերազանցել վարկային պարտավորության 70 տոկոսը և 10 մլն դրամը, այնինչ ԵՄ-ում, բացի երաշխիքային հիմնադրամներից, գոյություն ունեն բազմաթիվ այլ գործիքներ, ինչպիսիք են, օրինակ՝ «Business angels» ցանցերի[11] ձևավորումը, ՓՄՁ սուբյեկտներին վարկային գծերի տրամադրումը, առևտրային վարկի տոկոսի մի մասի՝ պետության կողմից մարումը և այլն:

Ելնելով վերոհիշյալից և հիմք ընդունելով «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիայի դրույթները՝ անհրաժեշտ է մշակել փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ծրագիր՝ ներդնելով ՓՄՁ ոլորտում ԵՄ անդամ և անդամակցող երկրների փորձը:

2007 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք է Խորհրդի «Զբոսաշրջության ոլորտում վիճակագրական տեղեկատվության հավաքման մասին» 1995թ. նոյեմբերի 23-ի թիվ 95/57/EC դիրեկտիվը:

Նախատեսվում է մշակել «Զբոսաշրջության ոլորտում տեղեկատվության հավաքման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվեն զբոսաշրջության ոլորտում հավաքվող տեղեկատվության ցանկը, տեղեկատվության հավաքման, մշակման և փոխանցման կարգը:

---

[8] Թիվ32, 03.08.2000թ.:

[9] 2004թ. դեկտեմբերի 2-ի ՀՀ կառավարության որոշում թիվ 1736-Ն՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2005 թվականի ծրագիրը հաստատելու մասին»:

[10] 2002թ. մարտի 19-ի ՀՀ կառավարության որոշում թիվ 282՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ ստեղծելու մասին»:

[11] «Business angels»՝ ոչ ձևական ներդրողներ, որոնք ֆինանսավորում են հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունները նրանց ստեղծման սկզբնական փուլերում՝ հետագայում գերշահույթ ստանալու ակնկալիքով: Վենչուրային հիմնադրամներից տարբերվում են նրանով, որ օգտագործում են սեփական, այլ ոչ թե ներգրավված միջոցները և որևէ ձեռնարկություն ֆինանսավորելիս մասնակցում են այդ ձեռնարկության կառավարմանը՝ սեփական փորձը փոխանցելով սկսնակ գործարարներին:

2009 թվական

Փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական հանձնաժողովի 2003թ. մայիսի 6-ի թիվ C (2003) 1422 առաջարկությանը:

Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման մասին Եվրոպական հանձնաժողովի առաջարկությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է մշակել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը կներառի փոքր և միջին ձեռնարկատիրության դասակարգման լրացուցիչ չափորոշիչների, անկախ, գործընկեր և փոխկապակցված ձեռնարկությունների սահմանումների և աշխատողների թվաքանակի որոշման կարգի մասին դրույթներ:

2.3. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	«Զբոսաշրջության ոլորտում վիճակագրական տեղեկատվության հավաքագրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1995թ. նոյեմբերի 23-ի «Զբոսաշ րջիկության ոլորտում վիճակագրական տեղեկատվության հավաքագրման մասին» Խորհրդի թիվ 95/57/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն)	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	
2009						
2.	«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2003թ. մայիսի 6-ի «Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման մասին» Եվրոպական հանձնաժողովի թիվ C(2003) 1422 առաջարկություն	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	
ԸՆԴԱՄԵՆԸ					30	

2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[12]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	-	Եվրամիությունում զբոսաշրջության ոլորտում վիճակագրության վերաբերյալ դասընթաց (3 օր/ 2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում փոքր և միջին ձեռնարկատիրության քաղաքականության վերաբերյալ դասընթաց (5 օր/ 2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[12] Օրենսդրական համապատասխանեցման աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունում և գերատեսչությունում կստեղծվի ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանում:

2.3 Քաղաքականության համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Փոքր ձեռնարկությունների մասին» խարտիային անդամակցություն	«Փոքր ձեռնարկությունների մասին» Եվրոպական խարտիա	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	15	
2.	ԵՄ քաղաքական փաստաթղթերի հիման վրա ՀՀ-ում ՓՄՁ քաղաքականության մշակում	Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի եզրակացություններ «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիա Քաղաքականության այլ փաստաթղթեր	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	3-րդ եռամսյակ	90	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			105	
			2008			
3.	Ընդունված քաղաքականությանը համապատասխան միջինժամկետ ծրագրի մշակում	«Գործարարության և ձեռնարկությունների, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման բազմամյա ծրագրի մասին» Խորհրդի 2000թ. դեկտեմբերի 20-ի Որոշում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	50	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			50	
			2009			
4.	Անդամ և անդամակցող երկրների լավագույն փորձի և Խարտիայի կիրարկման հաշվետվությունների հիման վրա տարեկան ծրագրերի մշակում	«Best» հաշվետվություններ «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիայի կիրարկման մասին ԵՄ անդամ պետությունների հաշվետվություններ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	50	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	Իրականացվող աշխատանքների մասին Եվրոպական Հանձնաժողովին և ՀՀ	-	ՀՀ առևտրի և տնտեսական	2-րդ եռամսյակ	40	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	կառավարությանը տարեկան հաշվետվությունների ներկայացում[13]		զարգացման նախարարություն			
ԸՆԴԱՄԵՆԸ					90	
ԸՆԴԱՄԵՆԸ					245	

[13] «Փոքր ձեռնարկատիրության մասին» խարտիային անդամակցելու դեպքում ՀՀ կառավարությունը պարտավորվում է ներկայացնել Եվրոպական հանձնաժողովին տարեկան հաշվետվություն՝ խարտիայի դրույթների կիրարկման մասին, այլ դեպքում՝՝ ՀՀ-ում ՓՄՁ քաղաքականության համար պատասխանատու մարմինը՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, պետք է հաշվետվություն ներկայացնի ՀՀ կառավարությանը՝ ՓՄՁ ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման մասին: